

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԵՆՆՔ

I.

Գրական նորութիւններ... Գրական աշխարհում շատ նորութիւններ կան և կարևոր նորութիւններ. բայց խօսքը հայ գրականութեան մասին է, որ — ի հարկէ — շատ ցածր մակարդակի վրա է: Այնուամենայնիւ կան, և պէտք է միայն զարմանալ, որ մեր Թիֆլիսի մամուլը սովորութիւն չի արել պարբերական տեսութիւններ անել մեր լրագիրների, ամսագիրների, ժողովածուների և գրքերի մասին: Այդ տեսութիւններից ընթերցողը կտեղեկանայ մեր գրական նորութիւնների մասին, իսկ հայ հեղինակները ունկնդիրների աւելի մեծ առաքիտօրիա կունենան: Գարող է յառաջանալ մտքերի փոխարինութիւն, որոշ կենդանութիւն կարող է մտնել մեր պարբերական մամուլի մէջ, կարելի կլինի ընթերցողին մօտեցնել մամուլին: Կովկասից դուրս հրատարակուող հայ թերթերն ու ամսագիրները աւելի լաւ են հասկացել այդ տեսութիւնների անհրաժեշտութիւնը և, օրինակ, Վեննայի և Վենետիկի Մխիթարեան օրգանները աշխատում են կամ տալ այդպիսի տեսութիւններ և կամ տալ պարբերական հրատարակութիւնների վերջին համարների բովանդակութիւնը: Առ ի չգույշ լաւագունի — այդ էլ մի բան է անշուշտ: Մեր հայ ընթերցողը կամ ուրիշից է վերցնում կարգալու նիւթը և կամ բաժանորդ է այս կամ պարբերական հրատարակութեան: Բաժանորդները միջին թիւը առնելով — հազիւ թէ մէկ թերթից (կամ ամսագրից) աւելի բան ստանան. առ առաւելն նրանք կարող են մի թերթ և մի ամսագիր (շաբաթաթերթ կամ վեցամսեակ) ստանալ: Ուրեմն որքան հետաքրքրական նիւթից նա զրկւում է:

Գրական տեսութիւնները—եթէ նրանք կանոնաւոր գրուած լինեն—կարող են մասամբ իւրիք այդ պակասը լրացրել: Ես այդ տեսակէտովն եմ ղեկավարուում, երբ խօսուում եմ այս կամ այն գրական նորութեան մասին:

Իբրեւ նոր երևոյթի վրայ անհրաժեշտ է նախ և առաջ մատնացոյց անել այն ուրախալի ուշադրութեան վերայ, որով վերջին ժամանակներս սկսել է օգտուել մեր ժողովրդական գրականութիւնը, մասնաւորապէս նրա մէկ ճիւղը՝ բանաստեղծութիւնները (երգերը): Վաղուց է հարկաւոր էր զբաղուել մեր ազգային այդ գանձով, բայց և այժմս էլ ուշ չէ կորստեան ճանկերից ազատել մեր այդ գրական հարստութիւնը: Սրանից մի քանի տարի առաջ ես մի խորհուրդ էի տուել մեր երիտասարդ գրասէրներին՝ պտտել ժողովրդի մէջ, անցնել քաղաքէ-քաղաք ու գիւղէ գիւղ ու հաւաքել ինչ որ գիտէ ժողովուրդը, ինչ որ մնացել է նրա մէջ «ի հնոց անտի»: Եւ ինչ որ ստեղծուում է առօրեայ կեանքում այժմ: Գրի առնել այդ բոլորը, հրատարակել, բացատրել և այլն—նշանակուում է անմոռանալի ծառայութիւն մատուցանել մեր ազգին, մեր գրականութեան: Սրինակ թող լինեն մեզ ոռոս սլաւեանօֆիլերը, որոնք անցեալ դարու կիսում անմահացրին իրանց հաւաքելով ոռոս ժողովրդական վէպերը, երգերը և եղանակները: Նոյնպիսի շրջաններ ու գործիչներ երևան են եկել Ֆրանսիայում, Չէխիայում և այլն: Ուրախութեամբ կարող եմ արձանագրել, որ այդ ասպարիզում մեր մէջ այժմ տիրում է ակնյայտի կենդանութիւն: Մի կողմից հրատարակուում են հին աշխատասիրութիւնների՝ Հախվերդեանի ժառանգները հրատարակուում են աշուղների երգերի մի մեծ հատոր, «Առմայի» վերջին համարում լոյս տեսան Գ. եպս. Սրուանձտեանի հաւաքած մի քանի հետաքրքրական ռաւառական երգեր, «Ազգագրական Հանդէսը», «Արարատը», «Անահիտը» և այլք—տալիս են այս ու այնտեղ հաւաքուած ժողովրդական երգեր, երգերի նոր վարիանտներ, աշուղների և ժողովրդական գրականութեան մասին նոր տեղեկութիւններ և ուսումնասիրութիւններ:

Այդ ընդհանուր հոսանքից անմաս չեն մնում թէ մեր, թէ եւրոպական և թէ Պօլսի հայ մամուլը:

Զուգընթացաբար դրա հետ գնում են խուզարկութիւններ մեր հին ու նոր գեղարուեստական գրականութեան մէջ: Այսպէս «Լուման» հրատարակեց Մ. Նալբանդեանի «Աղցմիքը», որը մի տաղանդաւոր պարագիւտ է Խորէն Գալֆայեանի լամարտինական բանաստեղծութեան. թէպէտ և ըստ բովանդակութեան — կատարեալ պոռնոգրաֆիա: Պէտք է խոստովանեմ, որ ես միայն քաջ գրաբառագէտների օգնութեամբ հասկացայ *Աղցմիքի* «իմաստ բանիցը» այնպէս որ հասարակ ընթերցողը հազիւ թէ մի բան հասկանայ այդ պարոդիայից: «Բանբեր» հանդէսն էլ հրատարակեց նոյն հեղինակի «Կայպակ» վերտառութիւնը կրող ոտանաւորը: Գուցէ սրանով Նալբանդեանը փորձել է՝ Վերգիլիոսին, Րուսսօյին և կամ Բագրատունուն հետեւլով մի «էփօս» ստեղծել: Գրուածքի ձեւը, բովանդակութիւնը, նկարագրութիւնները և այլն — էփիկական, վիպասանական են. սակայն գեղարուեստական կողմից — թոյլ է և շինծու: Այնուամենայնիւ այդ երկու գրուածքներն էլ որոշ կերպով բնորոշում են Մ. Նալբանդեանի տաղանդը, ճաշակը, բնաւորութիւնը և այլն: Նրա կենսագրութեան համար անշուշտ մեծ նշանակութիւն կունենան այն նամակները և նիւթերը, որոնց մասին խօսում է պ. Եր. Տահադեզը իր վերջի յօդուածի մէջ (տես «Լումայ» № 2): Հետաքրքրական են նոյնպէս և «Մուրճ»-ում յոյս տեսած Սո. Նազարեանի նամակները: Գաղթական հայերի պատմութեան համար նշանակութիւն ունին անշուշտ և Տահան Զրպետի մի յօդուածը Լիվօրնոյի և Ամստերդամի հայերի մասին, որ վերջերս հրատարակեց «Անահիտը» բնագրի Ֆրանսերէնը հայերէնի վերածելով: Հայերը Լիվօրնօ (Livorno) եկան 1553 թ. ընդամենը 15 հոգի էին դրանք: «Այդ հայերն են, ասում է Ե. Զրպետը, որոնք առաջին անգամ ըլլալով այդ քաղաքին մէջ ներմուծեցին հնդկական պոստասները, շեշտաւոր կտաւները, Պարսկաստանի, Հալէպի, Մանիսայի մետաքսեղէնները և բուստը (le ooreil) բանելու և յղկեցնելու կերպը»: Այժմ Իտալիա-

յի որ քաղաքումն էլ որ լինիք, կտեսնէք կողալէ իրեղէններ՝ իբրև բուռ տեղական ապրանք։ Հայերը ունեցել են իրենց եկեղեցին, ուսումնարանը, ժողովատեղին և այլն։ Նոյնը հարկաւոր է ասել և Ամստերդամի (Հոլլանդիայի) հայերի մասին, որոնք, բացի այդ բոլորից ունէին նաև իրանց տպարանը, յայտնի էին իրանց ազգասիրական ձգտումներով։ Ուր են դրանք այժմ, դրանց սերունդները։ Գոնէ Ամստերդամում ես անցեալ տարի ոչ հայ գտայ և ոչ էլ հայերի մասին տեղեկութիւն ունեցողի պատահեցայ։ Սակայն նոյն Ամստերդամում ես այցելեցի հրէական թաղը և տեսայ նրանց հոյակապ սինագոգներէց մէկը։ Հայերը ստիպաւ առ սակաւ ձուլուեցան՝ Ամստերդամում Հոլլանդացիների հետ, Լիվորնոյում—իտալացիների հետ։ Այդ ձուլումը սկսոււմ է շատ շուտ, ինչպէս այդ կարելի է գուշակել նրանց ազգանուններից՝ Միրիմանի (Mirimany), Սալվատորի (Salvatory) և այլն, նոյնպէս և այն հանգամանքից, որ շատերը ամուսնացել են իտալուհիների հետ։ Այսպէս միշտ և ամենուրեք։

Մի հետաքրքրական գրական անձի հետ ծանօթացնում է մեզ «Բազմավէպը»։ Դա պոլսեցի գրող Սեպուհ Լազ. Մինասեանն է, որ իր ժամանակին (ծն. 1825—մեռաւ 1887) բաւականին ծանօթ անձն է եղել և թողել է բաւականին հարուստ գրական ժառանգութիւն։ Թէպէտ և ես «բազմավէպցիների» գրական ճաշակին չեմ վստահանալ, այնուամենայնիւ բերուած ցուցակից երևում է, որ Մինասեանը իսկ որ գրական մարդ է եղել և իր ոլտերը փորձել է թէ բանաստեղծութեան մէջ, թէ վիպագրութեան, թէ թատերագրութեան և թէ թարգմանութեան մէջ։ Թէպէտ և ըստ երևոյթին նրա գրուածքները ֆրանսիացի վիպասանների (Հիւգօ, Դիմա և այլն) հաւանողութեամբ են գրուած, այնուամենայնիւ հետաքրքրականն այն է, որ նա պահանջ է դրացել իր վէպերի և դրամաների նիւթը վերցնել Պօլսի հայերի կեանքից։ Այսպէս նա գրում է վէպ՝ «Վսեմ անձնագոհ մը»—Պօլսի կեանքէն, հերոսուհին էլ—տիկ. Զա-

բուհին է։ Բերալի հայոց կեանքէն գրում է դրամաներ և կատակերգութիւններ և այլն։ Լաւ կսնէր «Բազմավէպը», եթէ գոնէ մի նմուշ տար մեզ այդ Մինասեանի գրուածքներէց։

Վերեւը ասացի, որ ես չեմ վստահանում «բազմավէպցիներէ» ճաշակին. հարկ կալ արդեօք ասելու թէ ինչո՞ւ. ժամանակին ես բերել էի օրինակներ նրանց անճաշակութեան։ Ահա և մի նորը՝ լոյս տեսաւ Յովհ. Թումանեանի բանաստեղծութիւնների ժողովածուն, որի մէջ այնքան տաղանդ է զգացուում, որքան բոլոր տարիների «Բազմավէպի» բանաստեղծութիւնների մէջ չկայ։ Յովհ. Թումանեանի տաղանդը ուրանալ անկարելի է։ Ճշշակ չպէտք է ունենաս, որ Յ. Թումանեանի բանաստեղծութիւնները (չեմ ասում բոլորը, այլ ընդհանուր առմամբ, լաւ է ասենք նրա «քնար»-ը) չհաւանես։ Բայց «Բազմավէպը» առանձին կարծիք է լալտնում։ Ահա նրա քննադատութեան նմուշները՝

«Յովհ. Թումանեան. բանաստեղծութիւններ. — Ծանօթ են այս գրագէտը ու իր Յարութիւն եղբայրը իրենց խելմը ընկած տեղերի ճիշտութեան հատորներով. գրքին անունը արդեօք պիտի հաւատացնէ ընթերցողին թէ այդ գրքերու բովանդակութիւնը ընկած տեղերի ճիշտութիւնն է։

Նախ՝ միթէ Յարութիւնը Յովհաննիսի եղբայրն է. չգիտէի. և դա ինչ նշանակութիւն կարող է ունենալ. երկրորդ՝ ո՞վ ասաց, որ Յովհ. Թումանեանը շատ գրող է. ընդհակառակը. երրորդ՝ բովանդակութեան հետ չը՝ ծանօթացած ինչ իրաւունք է կասկածել նրա արժանիքի մասին։

Անցնենք։

«Ե. Թումանեան ուսուսհայ է ուստի ընաւ իրաւունք չպիտի ունենանք անոր բանաստեղծութեանց տաղաչափութեան վրայ խօսելու, այդ առանձնաշնորհութիւնը ուսուսհայոց տրուած է»։

Իսկ «Բազմավէպցիներին» ուրիշ առանձնաշնորհութիւն է տրուած՝ անպատիժ վայր ի վերոյ քննադատութիւններ անել, գիտցած-չգիտցած բաների մասին խօսել, և իրենց աչքերի գերանը չնկատել։ Քանի-քանի անգամ ես ցոյց էի տուել, որ նոյն «Բազմավէպը»

էջերում տպուող «այսպէս կոչուած» բանաստեղծութիւնները ոչ մի չափով չեն գրուած, ճիշդ է «մերոնք» մի քիչ բոբիկ են տաղաչափութեան տեսակէտից և Գուրեանի կամ Պէշիկթաշեանի նման վերսիֆիկատոր չեն. բայց միթէ Բաղմալէպցի ոտանաւորչները նոյն բանում չեն մեղանշում: Ահա տեսէք. «Բաղմալէպի» 1904 թ. մարտի համարում տպուած է Գայծ-ի «Սրտի փոթորիկ» կոչուող տափակ ոտանաւորը. մեծ կանոնաւոր ոտանաւոր է դա: Համեցէք նրա վերջին տունը՝

«Խեղախ փոթորկից ես չը զարհուրայ

Եւ ոչ ալետանջ նաւն էր ինձ օտար.—

Ձէ որ այս կուրծքը նոյն ծովն է հսկայ

Եւ դողդոջ սիրտս նաւը թըշուառ...

Մի տողի մէջ երեք ը. բայց այդ էլ չի օգնել խեղճ «պուռէգին» ու էլի վերջի տողի մէջ մի վանկ պակասում է, եթէ ի հարկէ չստիպէ նա մեզ թշուառ բառը թըշուառ կարգաւ: Գուցէ բանաստեղծը այդ ընթերցումից չը զարհուրայ», բայց ես, ինչ մեղքս պահեմ, կզարհուրամ... Մախլաս. անցնենք քննադատութեան: Թուամանեանի երգերը կարճ նուագներ են ուր կան ոտանաւորներ որոնց ոմանց միայն վերնագիրը գեղեցիկ է... ոտանաւորներ կան, որ ընթերցողը «ինչո՞ւ գրած է» հարցումը պիտի ընէ և կամ պիտի դարձնէ թուղթը շարունակութիւնը կարդալու համար, նոր վերնագիր մը պիտի իմացնէ ընթերցողին, թէ նախորդին մէջ ամբողջութիւն մը չկար... լեզնողները որ երգերուն կը յաջորդեն բանաստեղծութիւն են. այս հարցումը պիտի ընեն ընթերցողները. սա առաջին տունէն ես ալ պիտի բողբոջեմ, որ այդ հէքիւթները բանաստեղծութեանց մէջ մտնելու պատիւն ունեցեր են...»:

Ու այս կիսածաղրական կիսահեգնական ոճով գրուած է ամբողջ յօդուածիկը: Այ խելօք Գաւիթներ. մենք ուրախացել ենք, որ Յովհ. Թուամանեանը «լէգէնդաներ», «հէքիւթներ» և «պօէմներ» է գրում և այն շատ լաջող, իսկ դրանք բողբոջում են: Ահա սրանց է մնացել ասպարէզը, սրանք են զարգացնելու հայ ընթերցողի ճաշակը իրանց ոտանաւորների ու թարգմա-

նութիւնների նմուշներով ու «իբր թէ» քննադատութիւններով:

Երանի մեզ:

Լուրջ քննադատութիւն, լուրջ վերաբերմունք դէպի գեղարուեստը, ընդունակութիւն ըմբռնելու գեղեցիկը և պատրաստութիւն գեղագիտութեան դասեր տալու ընթերցողին—ահա ինչ է մեզ պակասում. ուստի ամեն մի փորձ այս ուղղութեամբ և այս ամալի ասպարիզում —արժանի է ամենայն ուշադրութեան և խրախուսանքի: Պետերբուրգում հրատարակուող «Բանբերը» անշուշտ բազմակողմանի պաշարով է ազգային գեղարուեստական գրականութեան ասպարէզը դուրս գալիս: Հանդէսը իր անբաժնիկ երկու համարներովն էլ տուեց բաւականին հետաքրքրական յօդուածներ և տաղանդաւոր վիպական-բանաստեղծական երկեր: Միայն իզուր պ. Ադոնցը կաշխատէ մեզ պատուաստելու տարօրինակ սիմբօլիզմը և գունատ դեկադանսը: Ով որ ընդունակ է գրել ու խօսել սիմբօլներով—բարեաջողում— թող խօսի ու գրէ. եթէ գրուածքը տաղանդաւոր է, կընդունուի, եթէ ոչ—կմոռացուի իսկոյն: Իսկ դեկադանսը... Դա հիւանդոտ գրականութիւն է և նրանով արժէր զբաղուելու միայն այն ժամանակ, երբ նա տիրող էր գրական ասպարիզի վերայ Եւրոպայում. իսկ այժմ... այժմ նա հոգեվարքի մէջ է, թող ուրեմն հանգիստ էլ մեռնի, առանց վարակելու մեր գրողներին, մեր բանաստեղծներին: Վարակուածներին էլ հարկաւոր է բժշկել, խելքի բերել և ոչ թէ խրախուսել «Բանբերը», ընդհակառակը, կոսմի անկողմնապահ լինել և հաւասար տեղ է տալիս թէ մեր հին, առողջ գրական ուղղութեան և թէ նոր՝ դեկադանսին և սիմբօլիզմին: Այդ երկու ուղղութեան բանաստեղծների մէջ մի տեսակ մրցում է տեղի ունեցել «Բանբեր»ի վերջին հատորի մէջ՝ Յ. Յովհաննիսեանի, Ա. Իսահակեանի, Ո. Անտփեանի և Յարութ. Թումանեանի կողքին կանգնած են՝ Հ. Համբարձումեան, Մ. Կիւրճեան, Վ. Մալեգեան, Վ. Թէքէեան, Ատոմ Եարճանեան, և Վ. Տիրանեան: Եւ ուշիմ ընթերցողը կտեսնէ, որ այդ երկու խմբի գրողները երկու զանազան ուղղութեան տէր մարդիկ

են, և մինչդեռ առաջի խմբի գրողների բոլոր ոտանա-
ւորներն էլ գրուած են պարզ ոճով, հասկանալի լե-
զուով, և ըմբռնելի բովանդակութիւն ունին, այնպէս
որ ամեն մէկիս մեզնից հասկանալի են և մեր սրտին
մօտ. — երկրորդ խմբի հեղինակների ոտանաւորները
գրուած են զարդարուն, պճնուած լեզուով, տարօրինակ
բառադարսութիւններով ու տաղաչափութիւններով,
վերամբարձ բովանդակութիւն ունին, թռչում են ան-
հունութեան մէջ և ըստ մեծի մասին այնքան ծանր
ու «փրիսոփայական», որ հասարակ մահկանացուի հա-
մար անհասկանալի են դառնում, ուստի և անպէտք
են մեծամասնութեանը:

Իսպենք օրինակներով. Իսահակեանը տուել է եր-
կու ոտանաւոր. յաջողներից չեն դրանք, բայց ամեն-
քին հասկանալի կերպով յոռետեսութեան երգն է երգ-
ւում նրանց մէջ: Յ. Յովհաննիսեանը տուել է երկու
գաղափարական ոտանաւոր, որոնց մէջ հասարակական
ցաւերն է շօշափում. ոտանաւորները ծանր են գրուած,
բայց լիովին ըմբռնելի: Յաջող ոտանաւորներ է տուել
Ո. Անտոնեանը, թէպէտ և ըստ բովանդակութեան մէկը
միւսին հակասող՝ «Աշնանային խոհեր»ի մէջ հեղինակը
հանգստութիւն, ներվանայ է քարոզում. «Հող չէ ըն-
կերների» մէջ — ընդհակառակը կոչում է՝

«Այլ միշտ վառ յուսով, անլաց, անհառաջ

Դիմենք անդադար առաջ ու առաջ»

նմանուելով Պլէշէէկի յայտնի «Впередъ друзей безъ
страха и сомнѣнья» բանաստեղծութեանը: Երկու ոտա-
նաւորներն էլ հարկաւոր ապաւորութիւնն են թողնում,
որոշ էմացիա են յառաջանում ընթերցողի մէջ:

Գեղեցիկ է նոյնպէս Յար. Թումանեանի ժողովրդա-
կան երգերի ձևով գրուած «Ոսմանսը». անփոյթ սիրոյ գովք
է սա: Հեղինակին յաջողուել է իր երգի ներքին բովան-
դակութեանը համապատասխան արտաքին ձև տալ (տա-
ղաչափութիւն):

Երկրորդ խմբի բանաստեղծներից ամենայաջող ոտա-
նաւորներ տուել է Հ. Համբարձումեանը. «Դարբինը»
անպայման յաջող գրուածք է, մտքերը յայտնուած են
ոչ շաբլոն ձևով, գաղափարը գեղեցիկ և վսեմ, միւս

ոտանաւորից չկալծակը ինչ հետո— մեզալօմանիայի հովեր է փչում: Երկուսի մէջ էլ տարօրինակութիւններ կան, բայց չափազանցացրած չեն, Մնացեալ հեղինակների ոտանաւորների մէջ ես տեսնում եմ բառերի կուտակում, երեւակայութեան թռիչքներ, մտքի զօռ և միեւնոյն ժամանակ բանաստեղծ լինելու անզօրութիւն: Իսկ մի քանի ոտանաւորները ուղղակի անհեթեթութիւններ են, հիւանդոտ գրչի վիժուածք: Ահա ձեզ Ա. Եարճանեանի «Արիւնը»՝

Տօգուներէն յոյսի բոլոր շուշանները թափեցան,
Օրերուն անգթութեանը մարմարներէն վար,
Մահագուժօրէն և անդադար...

Եւ արբշիւ և ուխտած հոգիները այլևս հանեցին,
Իրենց լաղթանակի և երազի վերարկուն երկար,
Գերեզմանող իրիկուններուն հետ,
Եւ աւերումի համայնապատկերին դիմաց...

.

Թաթարիւր Թաթոս, թաթարիւր... բացականչում եմ ես Ադամեանի նման: Սա ինչ զառացանք է. և ինչո՞ւ սա բանաստեղծութիւն է և ոչ «շլա-փլալ»...

Ուր վերցանում է հանճարը—այնտեղ սկսւում է խելագարութիւնը: Բայց սա ոչ թէ հանճարի, ոչ խելագարի արտադրութիւն է, այլ հայ—դէկադէնտի:

Նոյն այդ տեսակ արժակ (առանց տաղաչափական օրէնքների) ոտանաւորներ է գրել և Վ. Տիրանեանը, որոնց միտքը սակայն աւելի ըմբռնելի է. այնուամենայնիւ դրանք ոտանաւոր չեն:

Վ. Թէքէեանը ընդունակութիւն ունի յաջող համեմատութիւններ անել, գեղեցիկ պատկերներով յայտնել իր միտքը—բայց զուրկ է պարզօրէն իր ուզեցածը յայտնելու ընդունակութիւնից: Նրա ոտանաւորները մի քանի անգամ պիտի կարդաս, պիտի կանգ առնես տողերի ու նախադասութիւնների վերայ, որ լաւ րմբռնես հեղինակի միտքը, մտապատկերը: Նրա ոտանաւորներին պակասում է թեթեւութիւն և երաժշտականութիւն: Աւելի ևս դժուարամարս են Մալէգեանի և Կիւրճկեանի երկու ոտանաւորները: Իմ եզրակացութիւններս՝ լաւ է քիչ ոտանաւոր տալ, բայց աւելի

ընտրովի. հիւանդոտ դեկատէնտական զառանցանքներին տեղ չտալ բնաւ: Ես որ լինէի այդ բոլորից հետեւալ ընտրութիւնը կանէի և կգետեղէի՝ Ա. Իսահակեանի «Մենակ մանկութիւնը», Յ. Յովհաննիսեանի—երկու ոտանաւորներն էլ. Ո. Անոփեանի—երկու ոտանաւորներն էլ. Վ. Թէքէեանի՝ «Հեթանոս սէր», Մ. Կիւրճեանի՝ «Երկւորեակները», Հ. Համբարձումեանի՝ «Դարբինը», Յ. Թումանեանի «Աղջի, երեսկ ալ լինիմ» ուսմանսը:

Մինչդեռ «Բազմավէպը» ասում է, թէ տաղաչափական կանոններ չգիտնալը ռուսահայ բանաստեղծների մեծաշնորհն է, ահա և Վ. Տիրանեան, տաճկաստանցի անկասկած, ցոյց է տալիս, թէ տաղաչափական որ աստիճանի անհեթեթութիւնների կարելի է հասնել: Այսպէս նա գրում է օրինակ հետեւեալ ձևով՝

«Այգէն առաջ, թեթեօրէն ահա ճամբա
իւն քալերս ինկած.»

կամ՝

«Անոնց բնիկ դեղեցկութիւնք՝ երբեք զիս գոհ
«Չէին ձգեր լիովին»:

Թէ «էինը» և թէ «չէինը» անկարելի է բաժանել իրանց գոյականներից և տեղաւորել նոր տողի սկզբում առանց այդ բայերի—նախընթաց բառերի շարքը ուղղակի անմտութիւն է, իսկ ամբողջ այդ ձևը—անհեթեթութիւն: Դա ինչ լիշեցնում է ռուս ոտանաւորի Տրետեակովսկու

Великая царица, о!

Пріѣхала въ Царское село,

И тамъ повелѣ-

ла և այլն.

Երևի Պօլսում սովորութիւն կայ այդ տեսակ ձևով բռնաբարել բանահիւսութիւնը, որովհետև նրանց ծաղրի առարկայ է շինել և Պարոնեանը: Վերջինս մի երգիծաբանական ոտանաւոր ունի Լամարտինի «Թէ ես թագաւոր ըլլալի» (լիշեցէք «Թէ իմ աւլաւոր հերքս սենալին») հետևողութեամբ գրուած. «Անահիտը» արտատրւում է «Թատրոնի» 1874 թ. համարից: 13 տունն էլ—ծաղր է պօլսական կեանքի զանազան երևոյթ-

ների վրայ՝ Գաղափար տալու համար բերենք մի քանի տունը՝

Թէ պատրիարք ըլլայի,
Կաթուղիկոսն Խաչատուր
Շուտ մը թեւէն բռնէի,
Եղմիածին ղրկէի:
Թէ ես խնդիր ըլլայի,
Վարչութիւնը զիս կառնէր
կը դարձունէր, դարձունէր
Մինչև հոգիս դուրս տալի:
Երեսփոխան թ' ըլլայի,
Ժողովին մէջ քուն քաշէի
Ձեռքերս միայն վերուցած
Առատ քուէ կուտայի:
Թէ թաղական ըլլայի,
Թաղին սնտուկ պարպէի,
Կրկնատոմար շինելով
Հաշիւները շտկէի
և այլն:

Տուներից մէկն էլ այս է՝
Թ' ապակենդրոնացականութիւն երբէք ըլլայի,
Խաղաղութիւն ազգին մէջ էի թողներ տանէի...
Ինչ լաւն է՝ թ' ապակենդրոնացականութիւն...
Ականջը կանչի մանուկ աղային, ներողութիւն —
Տիրանեան Վ-ին. նա ինչո՞վ պակաս է որ Պարոնեանից.
ահա մի օրինակ ևս նրա «Հագրուանը» ոտանաւորից
«Իզուր ինքզինքս խաբելու համար,
Ժպտիլ լերանց, դաշտաց ես վատօրէն
Փորձեր էի. անհրլու անծանօթին՝
Անոնք չէին ինձ ժպտեր»:
և այլն և այլն. այս ձևով, ոճով և բովանդակու-
թեամբ երեք ահագին էջ...

Տիրանեան, Եարճանեան և այլք թիթեռնիկների նման թռչում են գիշերուայ լուսի վրայ և այլում են իրանց թեւերը լապտերի բոցից: Եւրոպայում նստած նրանք Բոալէրների, Վերլէնների շաւղով են գնում և «անկման շրջանի» գրականութեան մէջ կամին գտնել

նոր գեղեցկութիւն, նոր ձև, նոր ոգևորութիւն: Ինչ-
պիսի ինքնախաբէութիւն:

Հազարապատիկ լաւ չէ միթէ մտնել մեր ժողովրդի
մէջ և այնտեղ որոնել գտնել բանաստեղծական գո-
հարներ, ժողովրդից սովորել ու նրա նման երգել պարզ
ու անկեղծ: Տեսէք ժողովրդական բանաստեղծութեան
ինչպիսի գեղեցիկ նմուշներ է բերում Մ. Աբեղեանը
«Արարատում»:

«Մեր ջուխտ գութան դաշտ կուբանի,

Ձուլօ խաթուն հաց կուտանի.

Մին կու քելէ, մին կու կայնի,

Աչքով, ունքով մարդ կու սպանի:

Եւ կամ՝

Պաղ ջուր պրծել, կուգայ սարէն,

Կուգայ, թափի մարմար քարէն,

Ձով հովցուցէ սրտիս եարէն

Եարնա դարձեր իրերդարէն:

Առաջին երկու տողը կարծես յունական անտալո-
գիայից վերցրած լինին, իսկ ամբողջը լիշեցնում է Հէյ-
նէին: Որպիսի յաջող նմանութիւն, որպիսի թախիժ,
որպիսի իրական արտայայտութիւն այրող, եռացող
սիրոյ:

ՄԻՆԱՍ ԲԵՐԱԵՐԵԱՆ